Արձանագրություն N 3
«ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/46» ծածկագրով ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի նիստի
(Մարքեթինգային արշավների կազմակերպում և իրականացում ծառայության ձեռքբերման)

ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 շենք 20 սեպտեմբերի 2022թ. Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պողոսեան

Գնման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գ. Այվազյան, Ֆ. Աթոյան Ս. Վանյան

ընթացակարգի քարտուղար՝ Ա. Ղարիբջանյան

1. ԷԱՃ ընթացակարգի մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ անգործության ժամկետի ավարտից հետո հաղթող ճանաչված «Ատմոս դիջիթլ» ՍՊԸ-ին https://eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պահանջ պայմանագրի և որակավորման ապահովման ներկայացման: Օրենքով սահմանված ժամանակահատվածում ընտրված մասնակիցը չի ներկայացրել պայմանագրի և որակի ապահովումները:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի, ***պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը: Ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակի ապահովումը չներկայացնելը հիմք է հանդիսանում պայմանագրի չկնքման:***

Ամփոփելով վերոհիշյալը՝ ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-22/46 ծածկագրով ընթացակարգը չկայացած է հայտարարվում համաձայն «Գնումների մասին» օրենքի 4-րդ կետի:

Առաջնորդվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ) ենթակետով՝ վերոնշյալը հիմք է հանդիսանում որպեսզի ընտրված մասնակիցը ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ _____ Ս. Պողոսեան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝

_____ Ֆ. Աթոյան

_____ Գ. Այվազյան